

- 8 Փառնակը Գ. Տնտրւանի ծածկանունն է: Ըստ երեսօթին նախապես չեն կողմնորոշվել, թե որ անունով ստորագրվի թարգմանութունը: Երկրորդ գործողութունից սկսած, թարգմանութւան տակ գրվել է Գ. Փառնակ ստորագրութունը:
- 9 Այդպիսի ակնարկ չկա նախաբանում:
- 10 Այդ ժամանակ տպագրվում էր երրորդ գործողութունը:

ՄԻ ՆՈՐ ԱՆՈՒՆ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հաղորդում վլադիմիր վառզանյանի

Տատերն են հայ գրականութւան մեջ Շեքսպիրով զրադվել: Եվ սխալված կլինեն մեր բանասերները, եթե կարծեն, թէ իրենց հայտնի է բոլորի անունները: Տասնամյակները փոշու տակ են թողել, մոռացութւան մատնել բավական թվով անուններ: Վ. Թեղդիբաշյանի «Շեքսպիրը հայերեն» աշխատութւունն առաջին փորձն է մի ամփոփ տեսութւան մեջ ընդգրկելու բոլոր նրանց, ովքեր առավել կամ պակաս հաջողութւամբ ձեռնամուխ են եղել Շեքսպիրի երկերը թարգմանելու գործին: Ոչ այդ գրքում, ոչ Ռ. Զարյանի լոնդոնյան դամախոսութւան մեջ՝ «Շեքսպիրը և հայերը», ոչ էլ Շեքսպիրին նվիրված բոլոր այն հոդվածներում, որ վերջերս լույս են տեսել մեզանում, չգտա մի անուն, որին հանդիպել եմ արխիվային պրպտումների ընթացքում:

Ահա այդ մասին է, որ կամենում եմ մի երկու խոսք ասել:

Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերութւան նախագահի անունով 1899-ին մի նամակ է ստացվել: Նամակի հեղինակն է դերասան Կարապետ Գալֆայանը, որին ուղարկել է ինի Փարիզ՝ բեմական արվեստի մեջ կատարելագործվելու: Գալֆայանը, ինչպես հայտնի է, հափշտակված էր Շեքսպիրով, ուսումնասիրում էր «Օթելլոն» և մանաւանդ «Համլետը», փորձեր էր անում անձնավորելու այդ ողբերգութւունների գլխավոր դերերը Փարիզում և Թիֆլիսում: Գալֆայանի այդ դերակատարումները, ինչպես վկայում են հայոց պարբերական մամուլի էջերը, հակասական, կարելի է ասել՝ իրարամերձ գնահատութւան արժանանալով՝ աղմկայի մթնոլորտ ստեղծեցին երիտասարդ դերասանի անվան շուրջը:

Գալֆայանի նամակից պարզվում է, որ «Արեւելյան մամուլում» Շեքսպիրի կյանքի և գործունեութւան մասին մի ուսումնասիրութւուն է լույս տեսել, որի հեղինակը Նառեկանն է: Նույն նամակից հայտնի է դառնում, որ Մամուրյանը հիացումով է խոսել մեզ անծանոթ այդ հեղինակի մասին, ասելով. «Գրեթէ առաջին անգամն է, որ մի հայ գրագետ ձեռնարկում է Շեքսպիրը իր ամբողջութւամբ հայոց ներկայացնելու դժվարին և բազմադրոյն պաշտոնը»:

Գալֆայանն այնուհետև գրում է, որ Նառեկանը հրաշալի տիրապետում է անգլերենին, որ հիացած է նրա մեծ տաղանդով և յայտնի առաջարկ է անում Հայոց հրատարակչական ընկերութւան նախագահին. «Միանգամայն վստահ լինելով, որ Դուք այդպիսի եռանդուն և անձնուրաց գրագետները քաջայերելու աղնիվ և վեհ սկզբունքն ունիք, խորհուրդ տվի նրան որ Զեզի ուղարկեք իր Շեքսպիրի ուսումնասիրութւան առաջին մասը,

որ կայարունակն Շեքսպիրի ընդարձակ կյանքն, Ռոմեոն և Ժյուլիէթ, Օթելլոն և անոր չքնաղ քրթվածքների մեծագույն մասը»²։

Հրապիրելով մասնագետ բանասերների ուշադրությունը նրանց տեսագաղափարի դուրս մնացած այս փաստի վրա, հուսով ենք, որ նրանք պարբերական մամուլում կգտնեն ե՞ս այդ ուսումնասիրությունը, և՛ Մամուրյանի կարծիքը դրա մասին։

Բացի այդ՝ նույն նամակում կա մի այլ ոչ պակաս, եթե չասենք շատ ավելի կարեւոր տեղեկություն, որ նույնպես նորություն է։ Պարզվում է, որ Ա. Նառեյանը զբաղվել է Շեքսպիրի ոչ միայն կյանքի և գործի ուսումնասիրությամբ, այլ նաև նրա երկերի թարգմանությամբ։ Գալֆայանը վկայել է, որ ինքը Ա. Նառեյանի հետ տեսակցություն է ունեցել և խմացել, որ նա նպատակ ունի թարգմանելու Շեքսպիրի երկերը, քանի որ մինչ այդ թարգմանվածները հեռու են բնագրից և լի են սխալներով։

Գալֆայանի նամակից երևում է, որ Նառեյանը «Օթելլոն» թարգմանել է. «Տիփիսի մեջ տպված և թարգմանված Շեքսպիրի պիեսները կարգացած լինելով, պ. Նառեյանի թարգմանած Օթելլոն գերազանցի խաղալ. իր ոճը պերճ և բնական է»։ Հետո ավելացնում է. «10-օրեն իր թարգմանած Օթելլոն պիսի խաղամ (հայերեն) Պարիզում»³։

Ուրեմն՝ Շեքսպիրի հայ թարգմանիչների շարքը համալրվեց մի նոր անունով՝ Ա. Նառեյան։

Մնում է շարունակել պրպտումները գտնելու «Օթելլոյի» այդ թարգմանությունը, ինչպես նաև պարզելու, թե դրանից բացի նա մի ուրիշ երկ թարգմանե՞լ է Շեքսպիրից, թե ոչ։ Նվ, Իհարկե, այս բոլորի հետ միասին՝ ի հայտ բերելու Ա. Նառեյանի անձնավորությունը լուսաբանող կենսագրական տեղեկություններ։

Մ Ա Ն Ո Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

1 Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 30, ց. 4, գ. 19, թ. 42—43։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում։

ՄԻ ՔԱՂՎԱԾՔ ԼԵՎՈՆ ԲԱՇԱԼՅԱՆԻ ՆԱԽԱԿԻՑ

Հաղորդում Գոհար Ազնավուրյանի

Անցյալ դարի 90-ական թվականներին արևմտահայ հայտնի գրող Լեոն Բաշալյանը իր հրապարակախոսական գործունեության անընդմիջմամբ ապրում էր Լոնդոնում և Աբ-փիար Արփիարյանի հետ հրատարակում «Նոր կյանք» հանդեսը։ Հանդեսի փաստական խմբագիրը հանդիսանում էր ինքը։

Լոնդոնում գտնված ժամանակ, նա սովորել է անգլերեն, հաճախել է դրադարաններ և թանգարաններ։ Թանգարաններում պրպտումների է կատարել, ծանոթացել եվրոպական հայտնի գեմերի ձեռագրերին և հրատարակության պատրաստել մի շարք հետաքրքիր նյութեր, որոնք լույս են տեսել առանց իր ստորագրության։ Արշակ Չոպանյա-